«ՈՒ՞Ր Է ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ո՞ՒՐ Է ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ» ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարցազրույցները վարեցին
Մարիամ Եղիազարյանը
Մարիամ Խալաթյանը
Արփի Մանուսյանը

Վերլուծության հեղինակներ՝
Մարիամ Եղիազարյան
Մարիամ Խալաթյան

Բովանդակային խմբագրումը՝
Մարիամ Խալաթյանի

Վերջնական խմբագրումը և հրապարակման նախապատրաստումը՝
Արփի Մանուսյանի

Լեզվական խմբագիր՝
Ազնիվ Նասլյան

Շարվածքը և ձևավորումը՝
Տաթև Եսայանի

ՍՈՑԻՈՍԿՈՊ SOCIOSCOPE

HEINRICH BÖLL STIFTUNG
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

Հետազոտությունն իրականացվել է «Հայնրիխ Բյոլ հիմնադրամի» Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ:

Վերլուծության համար պատասխանատու է «Սոցիոսկոպ» հետազոտական կենտրոնը: Վերլուծության մեջ տեղ գտած տեսակետները կարող են չհամընկնել հետազոտության մասնակիցների, ինչպես նաև «Հայնրիխ Բյոլ հիմնադրամի» Հարավային Կովկասի տարածաշրջանի երևանյան գրասենյակի տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

մուտք. քաղաքացիական հասարակությունը
քաղաքական դիսկուրսի առանցքում 4

հետազոտության մեթոդաբանությունը 7

1. քաղհասարակությունը լեգիտիմության ճգնաժամում 9

2. ո՞րն է «իրական» քաղհասարակությունը,
և ո՞վ է սահմանադրողը 12

3. թիրախավորող դերակատարների քարտեզագրում 17

3.1. երբ լռեցումը գալիս է ներսից 21

3.2. մեդիան և քաղհասարակությունը՝
քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում 24

ամփոփում. քաղհասարակության դիմակայունության
հնարավորությունները 30

ՄՈՒՏՔ. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԱՌԱՆՑՔՈՒՄ

Վերջին տարիներին Հայաստանի քաղաքացիական հասարակությունը ոչ միայն անցնում է խորքային վերափոխումների միջով, այլև հայտնվում է տարբեր դերակատարների համակարգային ճնշումների թիրախում:

Նմանօրինակ ճնշումները հատկապես ակտիվանում են քաղաքական նշանակալի իրադարձությունների և լարվածության հետնախորքում. նախընտրական համատեքստը և քաղաքական պայքարները պարարտ հող են քաղհասարակությանը թիրախավորելու և առհասարակ դրա գործունեությունը ապալեգիտիմացնելու համար: Հայաստանյան համատեքստը՝ հետհեղափոխական շրջանի դինամիկան, Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, բռնի տեղահանումը և քաղաքական վերադասավորումներն իրենց հերթին ձևավորել են մի միջավայր, որտեղ քաղհասարակությունը գործիքայնացվում և դիսկուրսիվ վարկաբեկման է ենթարկվում:

Քաղհասարակության թիրախավորման պրակտիկաները նոր երևույթ չեն, սակայն 2026 թվականի հունիսի խորհրդարանական ընտրությունների համատեքստում դրանք դարձել են հանրային և քաղաքական դիսկուրսի առանցքային տարրերից մեկը: Եթե նախկինում թիրախավորումը հիմնականում իշխող քաղաքական վերնախավի և նրա հետ ասոցացվող ուժերի կողմից էր՝ ուղղակի ճնշումների միջոցով, ապա հետհեղափոխական շրջանում այն ձեռք է բերել ավելի բարդ և բազմաշերտ բնույթ՝ վերածվելով ապալեգիտիմացման ցրված գործընթացի: Այս պայմաններում թիրախավորումն այլևս մեկ դերակատարի կամ կենտրոնի նախաձեռնությունը չէ, այլ ձևավորվում և շրջանառվում է տարբեր քաղաքական ու քաղաքացիական ուժերի, համայնքային խմբերի և նույնիսկ քաղհասարակության նախկին ներկայացուցիչների մասնակցությամբ:

Նախընտրական համատեքստում քաղաքացիական հասարակության թիրախավորումը գնալով դուրս է գալիս ուղղակի քննադատության շրջանակից՝ վերածվելով հանրային և քաղաքական օրակարգը ձևավորող կարևոր դիսկուրսի:

«Ո՞ւր է քաղաքացիական հասարակությունը». սա հանրային քննարկումների կրկնվող հարցադրումներից է, որով փորձ է արվում ձևակերպելու քաղաքացիական հասարակության ենթադրյալ բացակայությունը,

լռությունը կամ անգործությունը իբրև աներկբա փաստ: Արդյունքում քաղհասարակության դերակատարները հայտնվում են բևեռացված քաղաքական դիսկուրսների կենտրոնում: Այս պայմաններում քաղաքացիական հասարակության լեգիտիմությունը սահմանափակվում է ոչ միայն ուղղակի ճնշումների, այլև ավելի խորքային՝ կառուցվածքային և դիսկուրսիվ մեխանիզմների միջոցով[1]:

Քաղհասարակության թիրախավորման միտումները միայն տեղական բնույթի չեն, այլ ունեն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ ավելի լայն աշխարհագրական ընդգրկվածություն՝ հատկապես աճող աջակողմյան ուժերի զարթոնքի պայմաններում: Արդյունքում քաղհասարակությունը հաճախ հայտնվում է ռեակտիվ դիրքում՝ ստիպված լինելով ոչ թե առաջ մղել սեփական քաղաքական և արժեքային օրակարգերը, այլ շարունակաբար պաշտպանել իր լեգիտիմությունն ու գոյության իրավունքը: Սա աստիճանաբար նեղացնում է քաղաքացիական սուբյեկտայնության տարածքը և նպաստում ժողովրդավարական և մարդու իրավունքների օրակարգերի լուսանցքայնացմանը:

Այսպես, օրինակ՝ ժամանակին Հարավային Կովկասում ժողովրդավարական զարգացման օրինակ ներկայացվող Վրաստանում վերջին տարիներին պահպանողական և ռուսամետ քաղաքական ուժերի ազդեցության խորացմանը զուգահեռ ձևավորվել են քաղհասարակության գործունեությունը սահմանափակող քաղաքական և իրավական մեխանիզմներ: Դրանց շրջանակում ընդունվել են օրենքներ, որոնք թիրախավորում են քաղհասարակության արտաքին ֆինանսավորման աղբյուրներին[2], ներկայացնում այն որպես «օտար շահերին ծառայող»[3] դերակատար, ինչպես նաև սահմանափակում պետության կողմից առաջ մղվող գաղափարաբանական և օրակարգային փոփոխություններին հակադրվող գործունեությունը[4]:

Հատկապես ընտրական գործընթացների համատեքստում քաղհասա-

1 Heinrich Böll Foundation. (2026, April 29). Armenia before the election: What kind of democracy will prevail. https://www.boell.de/en/2026/04/29/armenia-election-what-kind-democracy-will-prevail

2 “GD Announces New Restrictions on Receiving Grants, Party Membership, ‘External Lobbying’.” (2026, January 28). Civil Georgia. https://civil.ge/archives/719193/

3 Gogia, G. (2026, February 9). Georgia initiates laws severely curtailing civil and political rights. Human Rights Watch. https://www.hrw.org/news/2026/02/09/georgia-initiates-laws-severely-curtailing-civil-and-political-rights

4 Office of the United Nations High Commissioner for Human Rights. (2024, September 17). Georgia: Call to rescind new anti-LGBTIQ+ law. OHCHR. https://www.ohchr.org/en/press-releases/2024/09/georgia-call-rescind-new-anti-lgbtiq-law

ռակության թիրախավորման տեսանկյունից նկատելի են Հայաստանի և Մոլդովայի միջև որոշ զուգահեռներ: Հետազոտության շրջանակում տեղական և միջազգային փորձագետների հետ զրույցները ցույց են տալիս, որ երկու երկրներում էլ քաղհասարակությունները բախվում են արագ փոփոխվող միջավայրում սեփական օրակարգերը ձևավորելու, դրանց համար կայուն աջակցություն ստանալու, ինչպես նաև հանրային վստահությանն ու ընկալմանն առնչվող մարտահրավերների: Միաժամանակ, Մոլդովայում որոշ համախմբող օրակարգեր, մասնավորապես՝ ԵՄ ինտեգրման և FIMI-ի դեմ պայքարի շուրջ, նպաստել են ավելի լայն համագործակցությանը, մինչդեռ Հայաստանում համագործակցության ձևաչափերը հիմնականում զարգանում են տարբեր թեմատիկ և բազմազան օրակարգերի շուրջ՝ հաճախ ունենալով ավելի սփռված և իրավիճակային բնույթ:

Նախընտրական շրջանում քաղաքացիական հասարակության թիրախավորմանը զուգահեռ կարևոր է անդրադառնալ նաև իշխող ուժի կողմից անկախ մեդիայի թիրախավորման դեպքերին: Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ ինչպես Մոլդովայում, այնպես էլ Հայաստանում մեդիայի նկատմամբ ցածր վստահությունը և տարբեր դերակատարների կողմից դրա թիրախավորումը կարող են խորացնել նաև քաղհասարակության շուրջ աղճատված ընկալումները[5]: Նախընտրական շրջանում քաղաքացիական հասարակության շուրջ ձևավորվող մեդիա դիսկուրսում նկատելի են ինչպես թիրախավորման և ապատեղեկատվության տարածման դրսևորումներ, այնպես էլ փոփոխվող իրականության պայմաններում քաղաքացիական հասարակության դերակատարման և գործելակերպի վերաիմաստավորման անհրաժեշտության վերաբերյալ քննարկումներ:

Քաղհասարակության թիրախավորման օրինակները, անշուշտ, ուղղակիորեն փոխկապակցված են ժողովրդավարության ցուցանիշերի նվազման հետ[6]: Իրավունքի, սոցիալական արդարության և հավասարության շուրջ գլոբալ փոխակերպումների արդյունքում ժողովրդավարական արժեքների պաշտպանության և առաջմղման

5 Սոցիոսկոպ (2026, հունվարի 28). Փակ, առցանց քննարկում հայաստանյան քաղհասարակության և միջազգային գործընկերների շրջանում:

6 Freedom House. (2026, March 19). Global Freedom Declined for 20th Consecutive Year in 2025.https://freedomhouse.org/article/new-report-global-freedom-declined-20th-consecutive-year-2025

ուղղությամբ գործունեություն ծավալող քաղաքացիական հասարակությունն առավել խոցելի է դարձել՝ բախվելով իր ինստիտուցիոնալ կայունությանը, գոյությանը և զարգացմանը առնչվող մարտահրավերների: Այս հոդվածը փորձ է՝ վերհանելու քաղհասարակության գործականության ճգնաժամի կառուցվածքային պատճառները՝ դրանք դիտարկելով տարաբնույթ գործոնների և նարատիվների փոխազդեցության տիրույթում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս հետազոտության նպատակն է համակարգային քննության ենթարկել գալիք խորհրդարանական ընտրությունների նախաշեմին քաղաքացիական հասարակության և մեդիա դաշտի դեմ ուղղված դիսկուրսիվ և կառուցվածքային թիրախավորման գործիքակազմը: Հետազոտությունը վերլուծում է ներքին և արտաքին դերակատարների կողմից շրջանառվող նարատիվների բովանդակությունը, դրանց ազդեցությունը քաղհասարակության գործականության և ժողովրդավարական գործընթացների վրա, ինչպես նաև քաղհասարակության դիմակայունության մեխանիզմները՝ հայաստանյան իրողությունները համադրելով տարածաշրջանային զարգացումների և փորձի հետ:

Այս համատեքստում հետազոտական առանցքը կառուցվում է հետևյալ խնդիրների շուրջ.

1. Նույնականացնել, քարտեզագրել և վերլուծել քաղհասարակությունն ու մեդիան թիրախավորող դերակատարներին՝ վերհանելով վերջիններիս կողմից ստեղծվող և շրջանառվող նարատիվների շարժառիթները, հաղորդակցական ռազմավարություններն ու հնարավոր ազդեցությունները:
2. Որակական վերլուծության ենթարկել քաղհասարակության և մեդիայի դեմ ուղղված գերիշխող նարատիվները՝ բացահայտելով դրանց ստեղծման մեխանիզմները և ազդեցության շրջանակը:
3. Տեղայնացնել այս նարատիվները տարածաշրջանային և գլոբալ համատեքստերում՝ համեմատականներ անցկացնելով այլ երկրների օրինակների հետ:

Հետազոտության առաջին փուլում իրականացրել ենք մեդիայի դիսկուր-

սիվ ուսումնասիրություն՝ կենտրոնանալով մեդիայում և սոցիալական հարթակներում քաղաքացիական հասարակությունը թիրախավորող առանցքային դերակատարների վրա: Վերլուծության շրջանակում հավաքել և ուսումնասիրել ենք նրանց սոցիալական մեդիայի և պաշտոնական հարթակների հրապարակումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակությանը վերաբերող մեդիա ելույթներն ու հարցազրույցները: Ուսումնասիրությունն ընդգրկել է ***2025 թվականի նոյեմբերից մինչև 2026 թվականի մայիսն*** ընկած ժամանակահատվածը՝ հնարավորություն տալով դիտարկելու թիրախավորման դինամիկան նախընտրական գործընթացների ակտիվացմանը զուգահեռ: Մեդիայի ուսումնասիրությանը զուգահեռ նախնական նարատիվների և դրանց շրջանակի բացահայտման հիման վրա իրականացրել ենք ***փորձագիտական հարցազրույցներ հինգ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և մեկ քաղաքական գործչի հետ:*** Հարցազրույցների նպատակն էր բացահայտել նախընտրական համատեքստում քաղհասարակությանը թիրախավորող հիմնական նարատիվները, դրանց ազդեցության շրջանակը, թիրախավորման դեպքերին արձագանքման ձևերը, ինչպես նաև ներգրավված ներքին և արտաքին դերակատարների շրջանակը: Քաղհասարակության ներկայացուցիչների ընտրության ընթացքում հաշվի են առնվել ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում գործունեության առանձնահատկությունները:

Հետազոտությունը չի սահմանափակվել միայն տեղական փորձառությամբ. այն ներառում է նաև քաղհասարակության թիրախավորման համեմատական անդրադարձներ Վրաստանի, Արևելյան Եվրոպայի և Արևմտյան Բալկանների երկրների օրինակներով: Դրանց ավելի խորքային ըմբռնման նպատակով իրականացրել ենք առցանց քննարկումներ միջազգային գործընկերների հետ:

1. ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ

Քաղհասարակության ապալեգիտիմացնող նարատիվներին անդրադառնալուց առաջ կարևոր է հասկանալ դրա ինստիտուցիոնալ և հանրային ընկալման առանձնահատկությունները: Քաղհասարակությունը բազմաշերտ և ոչ հոմոգեն դաշտ է, որը ներառում է տարբեր դերակատարներ, նպատակներ և գործելաոճեր: Ներքին և արտաքին դերակատարների կողմից ապալեգիտիմացվող նարատիվները հակված են պարզեցնելու այս բազմազանությունը՝ ներկայացնելով ոլորտը որպես մեկ ամբողջություն և նեղացնելով դրա գործունեության տարածքը: Արդյունքում նույնիսկ առանձին կազմակերպությունների թիրախավորումն ազդում է ամբողջ ոլորտի լեգիտիմության և հանրային ընկալման վրա:

Փորձագետների դիտարկմամբ՝ համայնքներում գործող կազմակերպությունների նկատմամբ ձևավորված բարձր վստահությունը չի ընդհանրացվում քաղհասարակության նկատմամբ: Այն մնում է անհատականացված՝ ուղղված կոնկրետ կազմակերպություններին, որոնք ընկալվում են որպես համայնքի ներկայացուցիչներ և ոչ թե ոլորտի մաս: Այս միտումը նկատելի է նաև Երևանում գործող քաղհասարակության կազմակերպությունների նկատմամբ: Առանձին կազմակերպությունների նկատմամբ վստահությունը հազվադեպ է վերածվում ոլորտային վստահության: Սա վկայում է, որ քաղհասարակությունը լայն հանրության կողմից ընկալվում է ոչ թե որպես համախմբված հանրային ոլորտ, այլ առանձին դերակատարների համախումբ: Վստահությունը ձևավորվում է հիմնականում «գետնի վրա» իրականացվող աշխատանքի և անմիջական շփումների արդյունքում՝ հաճախ չխորանալով ոլորտի ինստիտուցիոնալ և արժեքային առանձնահատկությունների մեջ:

> *«Իմ կարծիքով, եթե կազմակերպությունն ուզում է խթանել տեղական մասնակցություն ասվածը, ու մասնակցությունը միաբևեռ չէ, այսինքն՝ մի տեսակ չի, մասնակցությունը տարբեր է լինում, ինքը պետք է ուղղակի լինի այդ համայնքներում հողի վրա: Պարտադիր չէ, որ հենց ապրի այդ համայնքում, ուղղակի լինի համայնքում, մտնի, դուրս գա և հասկանա, լսի՝ մարդիկ իսկապես ինչ են ցանկանում կամ ինչի կարիք ունեն»:*

Իրավապաշտպան, բնապահպան

Քաղհասարակության շուրջ ձևավորվող բաժանարար և ապալեգիտիմացնող նարատիվները ոչ միայն խորացնում են հանրային անվստահությունը[7], այլև փորձում են վերասահմանել քաղհասարակության դերն ու լեգիտիմությունը քաղաքական և սոցիալական դաշտում: Այս գործընթացն ուժեղանում է նաև քաղհասարակության ներսում առկա տարաձայնությունների և դրանց շուրջ ձևավորվող հանրային քննարկումների ազդեցությամբ:

Քաղհասարակության նկատմամբ պետական մակարդակում ձևավորված որոշ ընկալումների համաձայն՝ «լեգիտիմ» են քաղհասարակության այն ներկայացուցիչները կամ կազմակերպությունները, որոնք առավել փոխգործակցող են իշխանությունների հետ: Նման մոտեցումը մարտահրավեր է քաղհասարակությանը՝ մտածելու սեփական ինքնավարության և սուբյեկտայնության հարցերի մասին: Արդյունքում քաղհասարակությունը կարող է վերածվել ոչ թե ինքնուրույն օրակարգեր և հանրային իմաստներ ձևավորող դերակատարի, այլ հակընդդեմ ուժերի կողմից սահմանված քաղաքական և դիսկուրսային շրջանակների նկատմամբ մշտապես արձագանքող մարմնի: Այս համատեքստում հատկանշական է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի ելույթը Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի գագաթաժողովի բացմանը. *«...Եվ այստեղ ես ուզում եմ դիմել այսօր հավաքված քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Պետությունը չի կարող միայնակ գործել: Մենք ապավինում ենք ձեզ, որպեսզի դուք լինեք մեր ժողովրդավարության իմունային համակարգը: Մենք ապավինում ենք ձեզ, որպեսզի դուք ապատեղեկատվությանը հակազդեք փաստերով և ապահովեք, որ մեր բարեփոխումները լինեն անշրջելի: Դուք ժողովրդավարական արժեքների պահապաններն եք»*[8]:

Հետևաբար քաղաքացիական տարածքի նեղացման և թիրախավորման դինամիկայի քննությունը կարևոր է ոչ միայն քաղհասարակության ինքնավարության պահպանման, այլև ժողովրդավարական համակարգի ինստիտուցիոնալ դիմակայունության գնահատման տեսանկյունից, ինչը նաև այս հոդվածի առանցքում է:

7 Սոցիոսկոպ. (2025). Ի՞նչ անել, երբ հին ակտիվիզմը չի աշխատում. ռադիկալացնել ժողովրդավարությունը. socioscope.am. https://socioscope.am/wp-content/uploads/2025/08/Civil-Society-and-Transformation_Arm-1.pdf

8 Միրզոյան, Ա. (2025, դեկտեմբերի 3). Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի քաղաքացիական հասարակության գագաթաժողով: ՀՀ արտաքին գործերի նախարարություն. https://www.mfa.am/hy/speeches/2025/12/03/Mirzoyan_EaPspeech/13653

Սեփական օրակարգերի ձևավորման, թիրախավորումներին արձագանքման ու դիմակայունության ամրապնդման խաչմերուկում քաղհասարակության անկախության և անաչառության պահպանման խնդիրը բնորոշ է ոչ միայն Հայաստանին, այլև մի շարք այլ երկրների: Օրինակ՝ դեռևս իննսունականներին նախ հումանիտար հարցերի, ապա մարդու իրավունքների պաշտպանության շուրջ խմբված Բոսնիա և Հերցեգովինայի քաղհասարակությունն այժմ բախվում է ռեսուրսներին ու գաղափարական առաջնահերթություններին առնչվող նման խնդիրների՝ ինչպե՞ս դիմակայել հեղինակազրկող թիրախավորումներին, պահպանել ֆինանսական և ինստիտուցիոնալ կայունություն, միաժամանակ գտնել հանրության լայն շրջանակներին ներգրավող և նրանց վստահությունն ապահովող նորարարական և գործնական եղանակներ:

«Չնայած քաղհասարակության կազմակերպությունները մարդկանց տրամադրում են կենսական կարևորություն ունեցող ծառայություններ, օրինակ՝ իրավական աջակցություն, աջակցություն բռնության ենթարկվածների, մարդասիրական օգնություն, նրանց «լրտեսներ», «օտարերկրյա գործակալներ» կամ «դավաճաններ» պիտակավորող շարունակական քարոզչական արշավները ազդում են կազմակերպությունների նկատմամբ հանրային վերաբերմունքի վրա: Միաժամանակ, քաղաքացիները հաճախ քաղհասարակությունից ունեն բարձր ակնկալիքներ, որոնք գործնականում հնարավոր չէ բավարարել: ՀԿ-ները հաճախ չունեն այն քաղաքական տարածքը կամ որոշում կայացնողներին հասանելիությունը, որոնք անհրաժեշտ են իրենց առաջ քաշած բարեփոխումները իրականացնելու համար, ինչը սահմանափակում է նրանց կարողությունը՝ ծառայություններն ու շահերի պաշտպանությունը վերածել նշանակալի համակարգային փոփոխությունների»:

Իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցիչ,
Բոսնիա և Հերցեգովինա

2. Ո՞ՐՆ Է «ԻՐԱԿԱՆ» ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ Ո՞Վ Է ՍԱՀՄԱՆԱԴՐՈՂԸ

Նախընտրական համատեքստում քաղհասարակության լեգիտիմության շուրջ ծավալվող հարցադրումները հաճախ զուրկ են բովանդակային քննադատությունից և ունեն ընդգծված քաղաքական-գործիքային բնույթ: Տարբեր ուժային կենտրոններ, մեդիա դերակատարներ և քաղհասարակության նախկին ներկայացուցիչներ հավակնում են վերասահմանելու «իրական» քաղհասարակության ինստիտուցիոնալ և արժեհամակարգային շրջանակները: Այս գործընթացում առանձնահատուկ դեր ունի ռեսենտիմենտի դիսկուրսը, որն օգտագործվում է քաղհասարակության նախկին ներկայացուցիչների կողմից՝ ներկայիս քաղհասարակությանը վարկաբեկելու և նրա տեղական գործականությունը կասկածի տակ դնելու համար:

Նախընտրական գործընթացների համատեքստում քաղհասարակության դերակատարության քննությունը պահանջում է «քաղաքական» և «ապաքաղաքական», «իրական» և «ոչ իրական» հասկացությունների գործառնական վերասահմանում: Հայաստանյան ներկայիս քաղաքական կոնյունկտուրայում քաղհասարակության սուբյեկտայնությունը բախվում է մի երկընտրանքի, որտեղ հանրային շահի պաշտպանությունը ենթադրում է ներգրավվածություն քաղաքական օրակարգերի ձևավորման մեջ, սակայն հենց այդ ներգրավվածությունն ինքնին օգտագործվում է իբրև քաղաքական տարբեր բևեռների կողմից ապալեգիտիմացման պատճառ: Քաղհասարակության լեգիտիմությունը ներկայում չափվում է ոչ թե գործառնական արդյունավետությամբ, հանրության հետ հարաբերությունների բնույթով, այլ քաղաքական ուժերի նկատմամբ դիրքավորմամբ: Իշխանական, ընդդիմադիր և նույնիսկ նախկինում քաղհասարակության մաս կազմած տարբեր կողմերի դիսկուրսում քաղհասարակությունը սկսել է ընկալվել որպես քաղաքական պայքարի ուղղակի կողմ:

Հետազոտության շրջանակում իրականացված խորքային հարցազրույցները փաստում են, որ քաղհասարակության շրջանում առկա է անհանգստություն, թե զանազան ուժեր փորձում են տարբեր նպատակներով գործիքայնացնել քաղհասարակության գործունեությունը:

«...Մենք «ապրանք» ենք քաղաքական գործիչների համար. իրենք մեզ «առնում են», «ծախում են»: Եթե ոստիկանության մասին գրել ենք՝ «անհամաչափ», աչքների լույսն ենք, մյուսների համար՝ աչքի գրողը: Գնդակի պես մեզ տանում-բերում են: [...] Բայց դա նաև անխուսափելի է, որովհետև չկան չեզոքության տեքստերը, որ դու գրես ու մի կողմում չհայտնվես: Ուղղակի հնարավոր չէ»:

Ժողովրդավարության հարցերով զբաղվող
քաղհասարակության ներկայացուցիչ

Սա վկայում է քաղաքական դաշտի այնպիսի հերմետիկության մասին, որտեղ ցանկացած տեքստ կամ գործողություն անխուսափելիորեն ստանում է ոչ թե պարզապես քաղաքականացված, այլ կուսակցականացված մեկնաբանություն: Քաղաքացիական պատասխանատվության սահմանն այստեղ դառնում է առավել քան զգայուն. դերակատարները հաճախ ստիպված են լինում կամ ընդունել «բազմակողմանի մեղադրանքի» անարդյունավետ մարտավարությունը, կամ գիտակցաբար լռել՝ խուսափելով մանիպուլյացիոն ծուղակի մեջ ընկնելուց:

«Ասում են՝ գրենք statement [թրգմ.՝ հայտարարություն], որ համ դուք եք սխալ, համ դուք եք սխալ»: Ասում եմ՝ բայց հասարակությունը մեզանից ուրիշ բան է ուզում: Դրա համար, եթե չունենք այդ ասելիքը, ավելի լավ է չգրենք»:

*Ժողովրդավարության հարցերով զբաղվող
քաղհասարակության ներկայացուցիչ*

Այս դիրքորոշումը վերհանում է նախընտրական փուլում քաղհասարակության առջև կանգնած հիմնարար մարտահրավերը, այն է՝ ինչպե՞ս պահպանել հանրային վստահությունն այն պայմաններում, երբ քաղաքականապես բևեռացված միջավայրում ցանկացած դիրքորոշված վերլուծություն կամ մեկնաբանություն կարող է թիրախավորվել: Արդյունքում քաղհասարակությունը հայտնվում է ոչ միայն գործառնական, այլև լեգիտիմության պարադոքսում. լռությունը հաճախ ընկալվում է որպես անտարբերություն կամ ընտրողականություն, իսկ խոսքը՝ որպես քաղաքական կողմնակալություն կամ պատվեր: Այս պայմաններում խնդիրը չի սահմանափակվում միայն արտաքին քննադատությամբ. ձևավորվում են նաև ավելի խորքային կառուցվածքային ազդեցություններ, երբ քաղ-

հասարակության դերակատարները ստիպված են մշտապես վերանայել իրենց խոսքի սահմանները, հանրային ներկայության ձևերը և արձագանքման ռազմավարությունները:

Երբ փորձագիտական եզրահանգումները թեկուզ մասնակիորեն համընկնում են իշխանական կամ ընդդիմադիր նարատիվներին, դրանք հաճախ ինքնաբերաբար դասակարգվում են քաղաքական դիրքավորման և քարոզչության շրջանակում՝ անկախ դրանց բովանդակությունից՝ այդպիսով զրկելով քաղհասարակությանը ինքնավար օրակարգ և դիսկուրս ձևավորելու կարողությունից:

> *«Ի վերջո, մեր շուրջը եղած օբյեկտիվ իրականությունը ՔՊ-ի մեկնաբանությամբ չի, չէ՞, որ ձևավորվում է: Մենք, անկախ նրանից, թե իրենք ինչ են ներկայացնում, կարող ենք, չէ՞, վերլուծել, թե որն է օբյեկտիվ իրականությունը, և ինչի հնարավորություն կա: Այդ դիրքորոշումը կա՛մ չկա, կա՛մ, եթե մարդիկ, որոնք փորձում են այդ վերլուծություններն անել, ու եթե դրանք որոշակի համընկնումներ են ունենում իշխանության ասածի հետ, նորից թիրախավորվում են որպես պրոպագանդա»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, հետազոտող

Խաղաղության խիստ կուսակցականացված օրակարգը թափանցում է անգամ առաջին հայացքից խաղաղաշինական գործընթացների հետ անմիջականորեն կապ չունեցող ոլորտներ: Օրինակ՝ դատաիրավական բարեփոխումների կամ բնապահպանության թեմաները նույնպես հակադրվում կամ ստորադասվում են «արժանապատիվ խաղաղության» նարատիվին: Հատկանշական է հետպատերազմյան և հետհեղափոխական համատեքստում բնապահպանական շարժումների թիրախավորումը[9], որտեղ բնական պաշարների պահպանությունը ներկայացվում է որպես Հայաստանի տնտեսական հզորացումը խոչընդոտող և Ադրբեջանի շահերից բխող գործողություն.

> *«Օրինակ՝ հանքերը պետք է ուժեղացնեն Հայաստանը, և, ա՛յ, կան բնապահպաններ, որոնք ուղղորդվում են, այսպես ասած, Ադրբեջանի կողմից՝ թույլ չտալու, որ Հայաստանը հզորանա:*

9 «Քաղաքացու ձայնը» Citizen's voice. (2025, նոյեմբերի 15). Ի՞նչ կեղծ նարատիվներ են տարածվում բնապահպանների դեմ Հայաստանում. Youtube. https://www.youtube.com/watch?v=_BviVTvnBhI

Սա նարատիվ է, որն ուղարկվում է ամբողջ ազգին ազգային անվտանգության ենթատեքստում»:

Իրավապաշտպան, բնապահպան

Այս դիրքորոշումը քաղաքացիական սեկտորի նորմատիվային վերասահմանման փորձ է, որտեղ լեգիտիմության չափանիշը գաղափարական և գործառնական տիրույթից տեղափոխվում է քաղաքական-դիրքային հարթություն: Ըստ էության, առաջ է քաշվում մի հայեցակարգ, որտեղ քաղհասարակությունը սահմանվում է ոչ թե իր արժեհամակարգով ու սոցիալական առաքելությամբ, այլ իշխանության հետ ունեցած բացառապես անտագոնիստական հարաբերությամբ: «Իրական» քաղհասարակությունը լեգիտիմացվում է ազգայնական նարատիվների սպասարկմամբ, մինչդեռ լիբերալ-դեմոկրատական արժեքներ կրող կամ պետական օրակարգի հետ հատման եզրեր ունեցող քաղհասարակության խմբերը «որակազրկվում են» որպես քաղաքական ուժի սպասարկողներ:

«Նրանք քաղհասարակություն չեն: Քաղհասարակությունն ինքը ձևավորվում է պետություններում ոչ թե ընդդեմ, այլ իշխանությանը հակադիր: Քաղհասարակությունը վերցնում է որոշակի շերտերի շահերն ու զբաղվում է իրենց շահերով: Հիմա, կարան հակադրվեն իրար իշխանությունն ու քաղհասարակությունը: [...]Ամենախոցելին ովքե՞ր են հիմա Հայաստանում: Արցախցիները՝ նրանք, ովքեր մասնակցել են Արցախի պաշտպանությանը, զոհվածի ծնողներն են խոցելի եղել, հիմա հոգևորականներն են խոցելի, Հայ առաքելական եկեղեցի կրոնական կազմակերպության սպասավորներն են խոցելի խմբերը: Այսինքն՝ ովքեր որ զբաղվել են էս մարդկանց շահերով, իրենց իրավունքների պաշտպանությամբ, իրենք էլ, ոնց որ, դարձել են էդ քաղհասարակությունը: Հիմա եթե իշխանությունն ինչ-որ մեկին ուղարկում է Բաքու իր օրակարգի համար, իր նպատակների համար, դա քաղհասարակություն կոչվել չի կարող: Դա կարա կոչվի Քաղաքացիական պայմանագրի հասարակություն»[10]:

10 Hayq News. (2025, նոյեմբերի 24) . Ադրբեջանական անկլավներ Հայաստանում չկան, Ալիևը՝ Փաշինյանի ձեռքով, սեղմում է օղակը Երևանի շուրջ. Youtube. https://www.youtube.com/watch?app=desktop&v=vcoheipFf-P0&fbclid=IwVERDUAOSnwpleHRuA2FlbQIxMABzcnRjBmFwcF9pZAwzNTA2ODU1MzE3MjgAAR7_MqCx7BaR-wrZC-CUGVHIcWoq6NYPd-hyxj5_7S1Ir3zKShKYeDOceewBN1g_aem_cIzYU8CALqa7Q0hy0uGpXQ

«Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության շուրջ հնչող քննադատություններն ու թիրախավորումները որոշ դեպքերում գալիս են նաև այնպիսի դերակատարներից, որոնք նախկինում ևս ներգրավված են եղել «Հայաստան–Ադրբեջան» քաղհասարակության ներկայացուցիչների և լրագրողների միջև փոխայցելությունների նախաձեռնություններում, այդ թվում՝ 2019 թվականին այցելելով Բաքու[11]: Այս պարագայում սեփական մասնակցությունը խաղաղաշինական գործընթացներին ներկայացվում է որպես ուժի դիրքերից արված գործողություն՝ շաղկապելով այն Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի հաղթանակի հետ: Սա ստեղծում է նորմատիվային շրջանակ, որտեղ լրագրողի կամ քաղհասարակության ներկայացուցչի այցը Ադրբեջան լեգիտիմ է միայն այն դեպքում, եթե այն ծառայում է հաղթողի դիսկուրսի վերարտադրմանը: Ցանկացած այլ մոտեցում, որը փորձում է դուրս գալ ուժային հիերարխիայից և փնտրել առավել իրատեսական ու ներկա իրավիճակից բխող երկխոսություն, պիտակավորվում է որպես «ոչ քաղաքացիական»[12]:

Այս համատեքստում քաղաքացիական հասարակությունը հայտնվում է մի նոր «ինտելեկտուալ շրջափակման» մեջ: Խաղաղության օրակարգի կուսակցականացումը (կամ դրա նույնացումը բացառապես իշխանական ծրագրի հետ) քաղհասարակությանը մարտահրավեր է նետում անվտանգային հարցերում սեփական, անկախ և ինստիտուցիոնալ օրակարգ ձևավորելու կարողությանը: Սա հանգեցնում է մի իրավիճակի, որտեղ կոնֆլիկտի հաղթահարմանն ուղղված ցանկացած մտավոր և վերլուծական ջանք դիտարկվում է որպես լեգիտիմության կորուստ, քանի որ քաղաքական որոշ բևեռներ շարունակում են շրջանառել հակամարտության շարունակականությունն ու ռազմական ելքերը սնուցող նարատիվներ:

11 Shant News. (2020, հունվարի 8). Հայ լրագրողների՝ 2019 թ. Բաքու կատարած այցի ամփոփումը SHANTNEWS-ի տաղավարում. shantnews.am.՝ https://www.shantnews.am/news/view/571332.html

12 168.am. (2026, նոյեմբերի 26). Այդ մարդիկ քաղհասարակություն չեն, Ալիևի թեզերը տարածողներն են. Էդգար Էլբակյան. Youtube. https://www.youtube.com/watch?v=hKdGSclrrEk

3. ԹԻՐԱԽԱՎՈՐՈՂ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ

Քաղհասարակության արժեզրկման համակարգային գործընթացներում, որքան էլ պարադոքսալ թվա, առանցքային դերակատարություն հաճախ ունեն նախկինում քաղհասարակության ներկայացուցիչ եղած և ներկայում քաղաքական դաշտում դիրքավորված գործիչները[13]: Հատկանշական է, որ նման դերակատարների քաղաքացիական և իրավապաշտպան փորձառությունը մեդիա դաշտում հազվադեպ է դառնում քննադատական քննարկման առարկա՝ հատկապես այն տեսանկյունից, թե ինչ ու մարդուի իրավունքների, ժողովրդավարության և քաղաքացիական մասնակցության վրա հիմնված մոտեցումները չեն վերածվում նրանց քաղաքական գործունեության շարունակական սկզբունքների: Արդյունքում ուշադրությունը տեղափոխվում է ոչ թե արժեքային շարունակականության, այլ քաղաքական վերադասավորումների և դերափոխությունների վրա: Այս դերակատարների կողմից ձևավորվող և տարածվող նարատիվները հաճախ կառուցվում են «նախկինների և ներկաների» բաժանարար տրամաբանության վրա, որը մեխանիկորեն տեղափոխվում է նաև քաղաքացիական դաշտ:

> *«...Դոնորների ճնշող մեծամասնությունը փող են տալիս, երբ որ դու կարողանում ես բացի պրոյեկտ ներկայացնելուց համագործակցել օրվա իշխանությունների հետ՝ կապ չունի այնտեղ ով է նստած: Իսկ Արևմուտքն ինչ-որ պահի հավատում էր, որ այստեղ փոփոխություններ են գնում: Լռեցին այդ մարդիկ, որովհետև չուզեցան փողից կտրվեն: Մի մասն էլ, ինչ ասեմ, ուղղակի էնքան քիչ են, որ չեն էլ ուզում խոսեն: Համաձայն չեն, հաշտ չեն այս վիճակի հետ, բայց դրանք հատուկենտ մարդիկ են մնացել[14]»:*

Սա ոչ միայն վերաձևակերպում է քաղհասարակության մասին խոսելու լեզուն, այլև վերասահմանում է, թե ով կարող է համարվել լեգիտիմ քա-

13 Հետազոտության շրջանակում փորձել ենք հարցազրույց անցկացնել Նինա Կարապետյանցի հետ՝ քննարկելու քաղհասարակության թիրախավորման միտումները: Սակայն հարցազրույցի առաջարկը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ իր դիրքորոշումն այս հարցի շուրջ արդեն ներկայացվել է մեդիայում:

14 Armcomedy, ԼուրջCast. (2026, հունվարի 11). Քաղհասարակության ճգնաժամը, 2026 թ. ընտրությունները, Youtube.https://www.youtube.com/watch?v=CvV2MUFjZlI&t=2215s

ղաքացիական դերակատար: Նման գործընթացները նվազեցնում են ներկայիս քաղաքացիական սուբյեկտների ինքնուրույնության ընկալումը և ստեղծում են պայմաններ հակաժողովրդավարական նարատիվների համար՝ «արտաքին ազդեցության», «ֆինանսական շահի» կամ «քաղաքական պատվերի» ձևակերպումների միջոցով:

Այս համատեքստում հատկապես խնդրահարույց է GONGO (Government-Organized Non-Governmental Organization) եզրի գործիքային կիրառումը՝ որպես քաղաքացիական դերակատարների պիտակավորման մեխանիզմ: Թեև դասական իմաստով այն վերաբերում է պետական կառույցների հետ կառուցվածքային կամ ֆինանսական կապ ունեցող կազմակերպություններին, ներկայիս բևեռացված դիսկուրսում եզրը հաճախ կորցնում է իր նկարագրական բնույթը և վերածվում է քաղաքական պիտակի: Իշխանության օրակարգերին համընկնող կամ ընդդիմադիր նարատիվներից շեղվող ցանկացած դիրքորոշում կարող է մեկնաբանվել որպես «իշխանական» կամ «կառավարվող»՝ քաղհասարակությանը վերագրելով քաղաքական պատասխանատվություն կրողի կարգավիճակ:

> *«Հիմա էս GONGO-ները ոնց որ նպաստեցին Արցախի հանձնմանը, նույնը հիմա պիտի շարունակեն նպաստել երևի Հայաստանի հանձնմանը, էլի»[15]:*

Մյուս կողմից՝ իշխող քաղաքական ուժի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիրը ևս քաղհասարակությունը դիտարկում է խիստ ուտիլիտարիստական (գործիքային) տեսանկյունից: Խորհրդարանական ընտրությունների շրջանակում ներկայացված նախընտրական ծրագրի[16] դրույթներում քաղհասարակությունը ներկայացված է որպես «խաղաղության ինստիտուցիոնալացման» օժանդակ օղակ, որի գործառույթը սահմանափակվում է միջպետական հարաբերությունների հաստատմանն ուղղված հումանիտար և մշակութային երկխոսության խթանմամբ:

15 Hayq News. (2025, նոյեմբերի 24) . Ադրբեջանական անկլավներ Հայաստանում չկան, Ալիևը՝ Փաշինյանի ձեռքով, սեղմում է օղակը Երևանի շուրջ. Youtube. https://www.youtube.com/watch?app=desktop&v=vcoheipFf-P0&fbclid=IwVERDUAOSnwpIeHRuA2FlbQIxMABzcnRjBmFwcF9pZAwzNTA2ODU1MzE3MjgAAR7_MqCx7BaR-wrZC-CUGVHIcWoq6NYPd-hyxj5_7S1Ir3zKShKYeDOceewBN1g_aem_cIzYU8CALqa7Q0hy0uGpXQ

16 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն (2026, ապրիլի 3). «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ծրագիրը Ազգային ժողովի 2026 թվականի հերթական ընտրություններում. վերցվել է՝ https://www.civilcontract.am/news-inner/924

Առավել ուշագրավ է ծրագրի 65-րդ կետով նախատեսված սոցկրեդիտների համակարգի միջոցով ՀԿ-ներին և լրատվամիջոցներին նվիրատվություններ կատարելու մեխանիզմը: Իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից[17] այս նախաձեռնությունն անուղղակիորեն ներկայացվում է որպես «իրական» մեդիային և քաղհասարակությանը հանրային աջակցություն ցուցաբերելու միջոց: Սակայն վերլուծական տեսանկյունից սա կարելի է որակել որպես լեգիտիմության զատորոշման իշխանական փորձ: Սահմանելով նպաստավոր պայմաններ «իրական» քաղաքացիական հատվածի համար՝ պետությունը փաստացի յուրացնում է «լեգիտիմ սուբյեկտին» որոշելու մեխանիզմը: Այսպիսով՝ քաղհասարակությունը հայտնվում է երկկողմանի էպիստեմիկ ճնշման ներքո: Ընդդիմադիր դիսկուրսը քաղհասարակությանը GONGO-ացնում է՝ կասկածի տակ դնելով վերջինիս անկախությունն իշխանությունից: Իշխանական դիսկուրսն իր հերթին փորձում է քաղհասարակության լեգիտիմության հարցն ինտեգրել պետական օրակարգերին՝ «իրականության» չափանիշերը շաղկապելով ֆինանսավորման նախընտրելի մեխանիզմների հետ:

Միաժամանակ, մեդիան՝ որպես հանրային իմաստների արտադրության հիմնական ինստիտուտներից մեկը, հաճախ մասնակցում է քաղաքացիական պայքարների ընտրողական վերակառուցմանը: Այսպես, օրինակ՝ ՍիվիլՆեթի «***Մաշտոցի պուրակից մինչև Թռչկան ու (հետ)հեղափոխություն. քաղհասարակության վերելքն ու…***[18]» ֆիլմում քաղաքացիական շարժումների պատմական ներկայացումները երբեմն շրջանակվում են այնպես, որ դրանց քաղաքական և սոցիալական նշանակությունը նեղացվում է, և դրանք դիտարկվում են որպես համեմատաբար «չեզոք» կամ «թույլատրելի» բողոքներ: Նման մոտեցումները նպաստում են քաղաքացիական հիշողության մասնակի խմբագրմանը՝ բաց թողնելով, օրինակ, կանանց շարժումների և այլ երկարաժամկետ պայքարների դերակատարությունը: Նման ընտրողական ներկայացումները ցույց են տալիս, որ խնդիրը ոչ միայն պատմության մեկնաբանությունն է, այլ նաև այն, թե ով ունի իրավունք՝ սահմանելու, թե ինչն է համարվում քաղաքացիական պայքար, և ով է դրա լեգիտիմ սուբյեկտը: Ավելին՝ ՍիվիլՆեթի մեկ այլ՝ «Փաշինյանի հանրային պոռթկումների քաղաքականությունը» փոդ-

17 Ռուբեն Ռուբինյան. (2026, մայիսի 9). Ինչպես լուծել անկախ լրատվամիջոցներ և ՀԿ-ներ ստեղծելու բարդ խնդիրը. տեսագրություն. Facebook. https://www.facebook.com/reel/904343602652290

18 Civilnet. (2026). Մաշտոցի պուրակից մինչև Թռչկան ու (հետ)հեղափոխություն. քաղհասարակության վերելքն ու… Youtube. https://www.youtube.com/watch?v=KZELfZuX-Ak

քասթի շրջանակում շարունակվում է «իրական» քաղհասարակության մասին նարատիվի վերարտադրությունը՝ այս անգամ հատկապես թիրախավորելով կանանց կազմակերպությունները: Դրանք ներկայացվում են որպես հասարակական ու քաղաքական զարգացումների նկատմամբ «լուռ և «ոչ գործուն» դերակատարներ՝ կրկին շրջանառության մեջ դնելով «որտե՞ղ է քաղհասարակությունը» հարցադրումը[19]: Միաժամանակ՝ նրանք խորացնում են ՀԿ-ների GONGO-ացման թեզը՝ պնդելով, թե ներկայումս «շատ քիչ են այն ՀԿ-ները, որոնք իսկապես կարելի է անվանել ոչ կառավարական կազմակերպություններ»: Հաղորդման մեջ հնչած գնահատականներին և մեղադրանքներին արձագանքել են մի շարք կանանց կազմակերպություններ՝ հանդես գալով քննադատական հայտարարությամբ և խնդրահարույց համարելով իրենց գործունեության նման ներկայացումը[20]: Միաժամանակ, քաղաքացիական հասարակության նկատմամբ նմանատիպ թիրախավորման և հանրային ճնշման պրակտիկաների առնչությամբ, հատկապես «ոչ ֆորմալ գրաքննության» դեպքերի համատեքստում, հայտարարությամբ հանդես է եկել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը[21]:

Այս գործընթացում մեդիան և քաղաքական դիսկուրսները փոխադարձաբար ամրապնդում են այն պայմանները, որտեղ քաղհասարակությունը ստիպված է մշտապես արդարացնել իր գոյությունը և անկախությունը: Իսկ հիմնական շահառուները դառնում են հակաժողովրդավար կամ պոպուլիստական ուժերը, քանի որ քաղաքացիական սեկտորի և մեդիայի միջև ձևավորված վստահության վակուումը աստիճանաբար լցվում է վերահսկելի և պարզեցված քարոզչական նարատիվներով: Այս պայմաններում մեդիա և փորձագիտական դաշտում հեղինակային կարծիքի՝ որպես «բացարձակ ճշմարտության» ներկայացման փորձերը ոչ միայն սահմանափակում են հանրային բազմակարծությունը, այլև յուրացնում են իրողությունները մեկնաբանելու լեգիտիմությունը՝ նեղացնելով այլընտրանքային ընթերցումների հնարավորությունը:

19 CivilNet. (2026, May 19). The politics behind Pashinyan's public outbursts [Video]. YouTube. https://www.youtube.com/watch?v=p9rwlOq9NB8

20 ԿՈԿ. (2026, May 21). Կանանց ՔՀԿ-ի միացյալ հայտարարություն՝ կանանց կազմակերպություններին վարկաբեկող և թշնամական դիսկուրսի վերաբերյալ. Women of Armenia. https://womenofarmenia.org/2026/05/21/statement-on-hostile-and-defamatory-rhetoric-targeting-women-led-ngos-arm/

21 ՀՀ մարդու իրավունքների պաշտպան. (2026, մայիսի 22). Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և իրավապաշտպանների …[Facebook]. https://www.facebook.com/share/p/1GcPyeH2hQ/

Այս համատեքստում պետական և ընդդիմադիր դիսկուրսները, թեև տարբեր լեզվաբանությամբ, հաճախ հանդիպում են նույն կետում՝ քաղհասարակության լեգիտիմության սահմանման մենաշնորհի շուրջ պայքարում: Ընդդիմադիր խոսույթում այն կարող է ներկայացվել որպես «պետականացված» կամ «GONGO-ացված», իսկ պետական մակարդակում՝ որպես կառավարվող կամ ուղղորդվող դաշտ, որը ցանկալի է՝ ինտեգրվի սահմանված քաղաքական նպատակներին: Այս երկկողմանի ճնշման պայմաններում քաղաքացիական հասարակությունը հայտնվում է այնպիսի միջավայրում, որտեղ նրա ինքնուրույն դիրքավորումը մշտապես կասկածի տակ է դրվում: Այսպիսով՝ մեդիա և քաղաքական դիսկուրսի, ինչպես նաև պիտակավորման գործիքների համադրմամբ ձևավորվում է միջավայր, որտեղ քաղհասարակությունը ոչ միայն պայքարում է իր օրակարգերի առաջմղման համար, այլև անընդհատ վերարտադրում է իր սուբյեկտայնության և լեգիտիմության պաշտպանության անհրաժեշտությունը:

3.1. Երբ լռեցումը գալիս է ներսից

Քաղհասարակությունը թիրախավորող նարատիվները տարածվում են ոչ միայն արտաքին դերակատարների կողմից, այլև ունեն ներքին դրսևորումներ: Փորձագետների հետ անցկացված հարցազրույցները ցույց են տալիս, որ քաղհասարակության ներսում ձևավորվող «լռեցնող» ձայները հաճախ արտահայտվում են լեգիտիմության սահմանների վերահսկման փորձերի միջոցով՝ որոշելով, թե ով, ինչի և ինչ սահմաններում կարող է խոսել:

Քաղաքական գործընթացների վերաբերյալ դիրքորոշում արտահայտելը հաճախ հենց քաղհասարակության ներսում ընկալվում է որպես «չեզոքության» խախտում, ինչի հետևանքով կասկածի տակ է դրվում ոչ միայն տվյալ դերակատարների մասնագիտական հեղինակությունը, այլև նրանց հանրային խոսքի լեգիտիմությունը: «Չեզոքությունը» դարձել է քաղհասարակության շուրջ հանրային և ներքին քննարկումների առանցքային հասկացություններից մեկը՝ վերածվելով ոչ թե նկարագրական, այլ նորմատիվ պահանջի: Սակայն հատկապես քաղաքականապես բևեռացված և հակամարտային միջավայրերում չեզոքությունը հազիվ թե դիտարկվի որպես գործնականորեն հասանելի դիրք: Քաղհասարակությունը գործում է մարդու իրավունքների, ժողովրդավա-

ության, արդարության և խաղաղության շուրջ, իսկ այդ հարցերն ինքնին քաղաքական բնույթի են: Հետևաբար խնդիրը ոչ թե քաղաքականությունից դուրս «մաքուր» դիրքի պահպանումն է, այլ սեփական արժեքների, պատասխանատվության և դիրքորոշումների թափանցիկ ձևակերպումը: Այս պայմաններում «չեզոքության» պահանջը հաճախ դառնում է կարգավորող մեխանիզմ, որի միջոցով որոշվում է ոչ թե միայն խոսքի բովանդակությունը, այլ նաև խոսողի լեգիտիմությունը: Փորձագետները նշում են, որ քաղհասարակության կողմից հնչեցվող քննադատությունն անգամ հաճախ պետք է տեղավորվի ներսում ձևավորված «ընդունելիության» շրջանակում: Այսինքն՝ սահմանափակվում է ոչ միայն արտահայտվող տեսակետների բազմազանությունը, այլև այն, թե որ դիրքորոշումներն են ընդհանրապես ընկալվում որպես արտահայտման իրավունք ունեցող: Փորձագետների ձևակերպմամբ՝ նման լռեցման պրակտիկաները հաճախ վերացնում են մասնագիտական կարծիքի և քաղաքական դիրքորոշման միջև սահմանները: Մասնագիտական դիտարկումները վերաիմաստավորվում են որպես քաղաքական հայտարարություններ, ինչը հանգեցնում է ինքնագրաքննության և հանրային խոսքի սահմանափակման:

> *«Ինձ թվում է՝ էս համակարգված գործելը կա և, որպես կանոն, ավելի շատ ուղղված է այն մարդկանց դեմ, որոնք որ փորձում են հենց այդ անկախ դիրքից վերլուծություններ անել: Օրինակ՝ պատահական չէ, որ «անաչառ» բառը դարձել է ինչ-որ հեգնական բան, ածական: ...քննադատությունների և թիրախավորման մեծ մասը վերաբերում է նրան, որ այդ անաչառ վերլուծությունների հեղինակներն անաչառ չեն»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, հետազոտող

Հանրային քննարկումներում այլընտրանքային տեսակետների նկատմամբ բացասական արձագանքները միշտ չէ, որ պայմանավորված են գաղափարական անհամաձայնությամբ: Հաճախ դրանք ընկալվում են որպես սպառնալիք արդեն ձևավորված նարատիվների նկատմամբ: Երբ փաստարկային հակադարձումը սահմանափակվում է, քննարկումները տեղափոխվում են խոսքի լեգիտիմության դաշտ՝ դրսևորվելով ուղղակի կամ անուղղակի հորդորներով՝ «այդ թեմային մի՛ անդրադարձիր», «այդ հարցի շուրջ մի՛ գրիր»:

Այսպիսով՝ խոսքը վերաբերում է ոչ միայն կարծիքների միջև անհամա-

ձայնությանը, այլև այն գործընթացներին, որոնց միջոցով սահմանվում են ընդունելի և անընդունելի խոսքի սահմանները: Նման պայմաններում թիրախավորվում է ոչ միայն կոնկրետ դիրքորոշումը, այլև հանրային խոսք ձևավորելու իրավունքը:

Հետազոտության մասնակիցները հատկապես մտահոգություն են հայտնում ներքին, հաճախ մտերիմ մասնագիտական շրջանակում պիտակավորման փորձերի և արտաքին թիրախավորման պայմաններում լռության դրսևորումների վերաբերյալ: Սա ձևավորում է լրացուցիչ անհանդուրժողականության միջավայր և սահմանափակում ներքին վստահության հնարավորությունները:

Քաղհասարակության ներսում բևեռացման առանցքային թեմաներից մեկը խաղաղության շուրջ դիրքորոշումներն են: Քաղաքացիական հասարակության ներսում առկա է նաև «վնասվելու» կամ «կեղտոտվելու» վախ՝ կապված զգայուն և քաղաքականացված թեմաների շուրջ հանրային խոսքի հետ: Արդյունքում խաղաղության մասին խոսող դերակատարները հաճախ հայտնվում են ավելի խոցելի դիրքում՝ ի տարբերություն պատերազմի կամ «արժանապատիվ խաղաղության» նարատիվներ շրջանառողների:

Միաժամանակ, փորձագետները նշում են, որ քաղհասարակության նարատիվները հաճախ կառուցվում են «ինչ-որ բանի դեմ» տրամաբանությամբ, այլ ոչ թե «ինչ-որ բանի համար» մոտեցմամբ: Սա հատկապես տեսանելի է խաղաղության օրակարգի շուրջ քննարկումներում, որտեղ խաղաղությանն աջակցելը հաճախ նույնացվում է իշխանություններին քաղաքական լոյալության հետ:

> *«Եթե քաղաքական դաշտում կա քննարկում՝ «կոնֆլիկտի հաղթահարո՞ւմ, թե՞ կոնֆլիկտի շարունակում», ես չեմ պատկերացնում, որ քաղհասարակությունը կարող է երկրորդի կողմնակիցը լինի: Այնինչ, ցավոք սրտի, մեզանում այդ «սա խաղաղություն չէ» և այլ տարբեր մոտեցումները փաստացի ասում են, որ կոնֆլիկտը դեռ պիտի շարունակվի, մինչև որ հասնենք «արժանապատիվ խաղաղության»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, հետազոտող

Հետազոտությանը մասնակցած փորձագետները բազմակարծությու-

նը դիտարկում են որպես առողջ դիսկուրսի կարևոր նախապայման: Սակայն նրանց քննադատությունը վերաբերում է այն հանգամանքին, որ նման խոսակցություններն ու պիտակավորումները հաճախ տեղի են ունենում փակ ներքին միջավայրերում՝ առանց թափանցիկության և արձագանքման հնարավորության: Սա խաթարում է ներքին վստահությունը և անտեսում համատեղ անցած ճանապարհն ու մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարական գործընթացների շուրջ կուտակված ընդհանուր փորձառությունը: Ներքին լռեցման փորձերն ու քաղհասարակության ներսում բևեռացումն իրենց ազդեցությունն են թողնում նաև ավելի լայն հանրային խմբերի շրջանում՝ խորացնելով առանց այդ էլ առկա անվստահությունն ու խաթարելով քաղհասարակության և հանրության միջև հարաբերությունները:

3.2. Մեդիան և քաղհասարակությունը՝ քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում

Քաղհասարակության ապալեգիտիմացման կարևոր հարթակներից մեկը մեդիան է, հատկապես՝ առցանց լրատվամիջոցները: Մեդիան ոչ միայն արտացոլում է արդեն գոյություն ունեցող նարատիվները, այլև ակտիվորեն մասնակցում է դրանց ձևավորմանը և վերարտադրությանը՝ հանդես գալով որպես դիսկուրսիվ իշխանության կրող: Լրագրողներն իրենք էլ մտնում են քննարկման այդ տիրույթ՝ բերելով արհեստականորեն օրակարգային դարձած «ո՞ւր է քաղհասարակությունը, ինչո՞ւ է ուշանում քաղհասարակության արձագանքը» հարցերը[22]: Ուշագրավ են նաև այն դեպքերը, երբ մեդիա հարթակներում իբրև փորձագետ հանդես եկող դերակատարները հավակնում են սահմանելու, թե ով է «իրական»[23] քաղաքացիական հասարակություն, և ով՝ ոչ, կամ ազդարարել քաղհասարակության «վախճանի» մասին[24]: Մեդիայում «իրական» ու «ոչ իրական» քաղհասարակության բաժանումներն առանձնահատուկ ինտենսիվություն ձեռք բերեցին այն փուլում, երբ Վաշինգտոնում խաղաղության պայմանագրի նախաստորագրումից հետո Հայաստանի և Ադրբեջա-

22 Սուքիասյան, Ա. (2025, նոյեմբերի 24). Ձեզանից ի՞նչ քաղհասարակություն. դուք գրանտների դիմաց Արևմուտքի օրակարգը սպասարկող գործիքներ եք. Սուրեն Սուրենյանց. 168.am. https://168.am/2025/11/24/2317888.html

23 ՀայաՔվե - HayaQve. (2025, նոյեմբերի 25). Իրական քաղաքացիական հասարակություն. մարդու իրավունքների պաշտպանության գործիքներ. Youtube. վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=w3a2RdhMyUE

24 Civilnet. (2026). Մաշտոցի պուրակից մինչև Թռչկան ու (հետ)հեղափոխություն. քաղհասարակության վերելքն ու… Youtube. վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=KZELfZuX-Ak

նի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև տեղի ունեցան փոխադարձ այցեր[25]: Այս իրադարձությունները, մի կողմից, հնարավորություն ընձեռեցին քաղհասարակության որոշ խմբերի բացահայտ կերպով ցույց տալու, որ խաղաղության օրակարգը համընկնում է իրենց օրակարգերին ու նպատակներին: Մյուս կողմից՝ այս զարգացումները քաղհասարակությանը թիրախավորելու նոր առիթ ստեղծեցին, իսկ խաղաղության մասին բաց խոսելն ու երկխոսության մաս կազմելը սկսեցին մեկնաբանվել որպես իշխանական օրակարգի սպասարկում այն պարագայում, երբ պատերազմի ավարտից անմիջապես հետո քաղաքացիական հասարակության որոշ դերակատարներ արդեն իսկ առաջ էին մղում խաղաղության արմատական կոչեր[26] նախքան դրա պետական օրակարգ դառնալը:

Վերլուծությունները, որոնք քննարկում են խաղաղաշինության հնարավորությունները, ակնթարթորեն պիտակավորվում են որպես «իշխանական քարոզչության» մաս կամ «թշնամական օրակարգի սպասարկում»:

> *«...Ամենամեծ նարատիվն այն է, որ խաղաղության մասին հիմա խոսելը նշանակում է իշխանական պրոպագանդիստ լինել, որովհետև դա ինչ-որ ֆեյք գործընթաց է[...], որին որպես հակադրություն բերում են «արժանապատիվ խաղաղություն» ասվածը, որի փակագծերը բնականաբար ոչ ոք չի բացում»:*

Քաղհասարակության ներկայացուցիչ, հետազոտող

Միաժամանակ, ինչպես քաղաքացիական հասարակությունը, այնպես էլ մեդիան և լրագրողները, հատկապես նախընտրական շրջանում, հաճախ հայտնվում են հանրային և քաղաքական դերակատարների քննադատության տիրույթում: Մեդիա տիրույթի քաղաքականացումն ու բևեռացումը ստեղծում են երկակի մարտահրավեր: Մի կողմից՝ օբյեկտիվության և պլյուրալիզմի սկզբունքներից շեղումները կարող են թուլացնել հանրային տեղեկատվական միջավայրի վստահելիությունը, մյուս կողմից՝ մեդիայի գործունեության քննադատությունը պահանջում է զգուշա-

25 «Ազատություն» ռադիոկայան. (2025, հոկտեմբերի 22). Ախ քարտուղարը հանդիպել է Հայաստան-Ադրբեջան քաղհասարակության ներկայացուցիչների երկխոսության մասնակիցների հետ. azatutyun.am. վերցվել է՝ https://www.azatutyun.am/a/33566987.html

26 Խաղաղություն առանց բայցերի. (2022, մայիսի 8). Epress.am. https://epress.am/2022/05/08/peace_has_no_altrernative.html

վորություն, քանի որ այն կարող է հեշտությամբ վերածվել ճնշման կամ ապալեգիտիմացման գործիքի:

Իշխող քաղաքական ուժի առանցքային ներկայացուցիչները պարբերաբար ստանձնում են հայաստանյան լրատվամիջոցների գործունեությունը գնահատողների դերը՝ սուբյեկտիվորեն սահմանազատելով «իրական» մեդիան «ոչ իրականից», «լավը» «վատից»[27]: Հանրայնորեն թիրախավորման նման պրակտիկաները, ինչպես նաև հետազոտության ընթացքում քաղաքական գործիչներից մեկի հետ մեր հարցազրույցը վկայում են այն մասին, որ օրվա իշխանությունը մեդիայի նկատմամբ որդեգրել է «լեգիտիմության վերասահմանման» մարտավարություն:

> *«Մեր մեդիան երկար տարիներ ընկալվել է որպես «սուրբ կով»: Վատ չի եղել, լավ է, որովհետև համենայն դեպս նախկին իշխանության օրոք մեդիան, հատկապես անկախ կամ ընդդիմադիր դիրքավորվող, եղել է վտանգի տակ. լրագրողների են ծեծել, մտել են խմբագրություններ և այլն, և այլն: Եվ դրա արդյունքում [...] մեդիան դիտարկվում էր որպես մի բան, որին պետք չի կպնել և չի կարելի կպնել: Կպնել, նկատի ունեմ, խոսքով:*
> *[...]*
> *Եվ ես հասկացա, որ շատ լավ, փաստորեն մեր լրատվական դաշտը չի պատրաստվում ինքնակարգավորվել, չի պատրաստվում էթիկային հետևել, չի պատրաստվում ֆինանսական միջոցները հրապարակել, այսինքն՝ իրենք համարում են, որ իրենք սուրբ կով են և ինչ ուզում են, պետք է անեն»:*
>
> Քաղաքական գործիչ

Այս պրակտիկան պարունակում է համակարգային ռիսկեր, քանի որ ենթադրում է պետական լծակների կիրառում մի դաշտում, որի կայունությունը հիմնված է մասնագիտական ինքնակարգավորման և անկախության վրա: Երբ քաղաքական իշխանությունը հավակնում է որոշումներ կայացնելու մեդիա դաշտի սուբյեկտների «իսկության» վերաբերյալ, ստեղծվում է նախադեպ, որը կարող է տարածվել հանրային կյանքի այլ ոլորտների,

27 Ռուբինյան Ռ., Ալեքսանյան Վ., (2026, հունվարի 15). Վախկոտ ձևիստներն ու հայրենասեր բենզինիստները | ԱՄԲԻՈՆ 6. Civic News. Youtube. վերցվել է՝ https://www.youtube.com/watch?v=1dirOCId2pg&list=PLsDQ6dyAs_k0lrFyZLCBie3evWgpAwv7I&index=2

օրինակ՝ քաղհասարակության վրա, որի նախադեպերը նախընտրական քաղաքական համատեքստում արդեն իսկ նկատելի են: Պետական պաշտոնյաների կողմից ոչ պետական սեկտորի ներքին տիրույթ ներխուժելը հաճախ հիմնավորվում է մեդիա ծառայությունների որակական, ինչպես նաև ֆինանսական թափանցիկության խնդիրներով, սակայն գործնականում դա կարող է թուլացնել ժողովրդավարական վերահսկողության անկախ մարմնի գործունեությունը:

Այս քաղաքական հռետորաբանությունն իր իրավական ամրագրումն է ստանում «Տեսալսողական մեդիայի մասին[28]» օրենքում վերջին փոփոխություններով: Նոր կարգավորումները, որոնք արգելում են օտարերկրյա հեռուստառադիոծրագրերում ՀՀ ներքաղաքական կյանքին միջամտող բովանդակության տարածումը, ստեղծում են լայն հնարավորություններ ընտրողական վերահսկողության համար: Թեև օրենքի հիմնավորումը հենվում է պետական ինքնիշխանության և տեղեկատվական անվտանգության պաշտպանության վրա, մասնագիտական համայնքի մտահոգությունները վերաբերում են «ներքաղաքական կյանքին միջամտություն» եզրույթի լայն մեկնաբանությանը[29]:

Քաղաքական ուժերի կողմից քաղաքացիական հասարակության և մեդիայի նկատմամբ կիրառվող թիրախավորող հռետորաբանությունը հաճախ պարունակում է խնդրահարույց և բևեռացնող բառապաշար: Հանրային դաշտում դրա տարածումը կարող է նպաստել ատելության խոսքի ձևավորմանը և պայմաններ ստեղծել իրավապաշտպանների, քաղաքացիական հասարակության և մեդիայի ներկայացուցիչների հանրային կերպարի արժեզրկման, ինչպես նաև դրանց լեգիտիմության շուրջ կասկածների ձևավորման համար: Միաժամանակ կարևոր է ընդգծել, որ քաղաքացիական հասարակությունը բազմաշերտ և ոչ հոմոգեն դաշտ է, որը ներառում է տարբեր դերակատարներ, խմբեր և գաղափարական ու գործառնական մոտեցումներ: Այնուամենայնիվ, հանրային դիսկուրսում շրջանառվող թիրախավորող նարատիվները հաճախ հակված են անտեսելու այս բազմազանությունը՝ներկայացնելով այն որպես միասնական և միատարր համակարգ: Արդյունքում դրանց ազդեցությունը տարածվում է ոչ միայն առանձին դերակատարների,

28 arlis.am. «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքը. վերցվել է՝ https://www.arlis.am/hy/acts/193040

29 «Ազատություն» (2026, փետրվարի 3). Օրենք, որ կարող է եթերներ փակել. մեդիադաշտը խստացնող նախագիծը հավանություն ստացավ Աժ հանձնաժողովում. Youtube. վերցվել է՝ https://youtu.be/pCIBi6-PQVU?

այլև ամբողջ ոլորտի վրա՝ ձևավորելով քաղաքացիական հասարակության նկատմամբ ընդհանրացված անվստահության մթնոլորտ:

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը Ֆեյսբուքյան գրառումներից մեկում[30] նախկին իրավապաշտպան և վարչապետի թեկնածու Նինա Կարապետյանցին անվանում է «օլիգարխամետ» իրավապաշտպան, ընդգծում նրա քաղաքական կողմնակալության հարցը: Սակայն հատկանշական է, որ նմանօրինակ դիսկուրսներում դերակատարների դիրքերը հաճախ միանշանակ չեն: Օրինակ՝ իշխանական շրջանակների կողմից «օլիգարխամետ իրավապաշտպան» բնորոշումներով թիրախավորվող դերակատարներն իրենց հերթին քննադատական կամ թիրախավորող նարատիվներ են տարածում նախկին գործընկերների և քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների նկատմամբ: Սա ցույց է տալիս, որ թիրախավորման և ապալեգիտիմացման մեխանիզմները հաճախ գործում են ոչ թե մեկ ուղղությամբ, այլ վերածվում են փոխադարձ և շրջանառվող պրակտիկաների՝ բարդացնելով քաղաքացիական հասարակության սահմանների, դերերի և լեգիտիմության շուրջ քննարկումները:

Իշխանական տարբեր դերակատարների կողմից շրջանառվող «որտե՞ղ է քաղաքացիական հասարակությունը» հարցադրումը հաճախ դուրս է գալիս պարզ հանրային հետաքրքրության շրջանակներից և սկսում գործել որպես նորմատիվ ակնկալիք՝ սահմանելով, թե երբ, ինչպես և ինչպիսի դիրքորոշմամբ պետք է հանդես գա քաղաքացիական հասարակությունը: Նման մոտեցումը կարող է ձևավորել մի իրավիճակ, որտեղ պետությունը ոչ միայն ակնկալում է քաղաքացիական հասարակության արձագանքը, այլև անուղղակիորեն սահմանում է դրա բովանդակության, ձևի և թույլատրելի սահմանների վերաբերյալ սպասումներ:

Մյուս կողմից՝ մեդիայի նկատմամբ կիրառվող լեզուն և դիսկուրսները նույնպես մտահոգիչ միտումներ են արձանագրում: Քաղաքական դերակատարների կողմից լրագրողների և լրատվամիջոցների հասցեին հնչող գնահատականները հաճախ դուրս են գալիս մասնագիտական քննադատության շրջանակներից՝ վերածվելով պիտակավորող կամ թիրախավորող հռետորաբանության: Այս համատեքստում հատկանշական

30 Harutyunyan, A. (2026, ապրիլի 3). Ցըմփ կամ օլիգարխամետ իրավապաշտպանը... [Ֆեյսբուքյան գրառում]. Facebook. https://www.facebook.com/reel/1659516132162880

է Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի արձագանքը լրագրողի հարցին, որ ցույց է տալիս, թե մեդիայի շուրջ քննարկումները մասնագիտական դաշտից ինչպես կարող են տեղափոխվել դեպի լեգիտիմության և վստահելիության շուրջ ձևավորվող բանավեճեր:

> ***«Եթե Նիկոլ Փաշինյանը չլիներ, ձեր մեծամասնությունը հիմա «ինոագենտ» կլիներ[31]»:***

ԱԺ նախագահ, Ալեն Սիմոնյան

«Օտարերկրյա գործակալ» եզրույթը ունի հստակ քաղաքական բովանդակություն և կիրառման պրակտիկա մի շարք երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում և հարևան Վրաստանում, որտեղ այն ուղղակիորեն սահմանափակում է քաղհասարակության ներկայացուցիչների գործունեությունը՝ հետապնդումներ և խուզարկումներ իրականացնելով նրանց գրասենյակներում, բնակարաններում և սպառնալիքի տակ դնելով նրանց գոյությունը երկրում: Այս եզրույթի ներմուծումը տեղական հանրային դիսկուրս լի է վտանգներով քաղաքացիական հասարակության գործունեության միջավայրի համար՝ նպաստելով դրա նեղացմանը և դերակատարների նկատմամբ ճնշումների աճին՝ հատկապես հետընտրական համատեքստում:

Միաժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը «ինոագենտ[32]» եզրույթի կիրառումը մեկնաբանում է որպես քաղաքական դերակատարներին ուղղված ձևակերպում: Քաղաքական դիսկուրսները, ձևավորվելով կոնկրետ ժամանակահատվածում, պահպանվում են հանրային հիշողության մեջ և վերարտադրվում որպես քաղաքական նարատիվներ՝ անկախ իշխանությունների փոփոխությունից: Ժամանակի ընթացքում դրանք կարող են ձեռք բերել ավելի լայն քաղաքական գործառույթ՝ տարբեր դերակատարների կողմից տարբեր համատեքստերում վերածվելով թիրախավորման գործիքների:

Մյուս կողմից՝ պետական և մասնավոր դերակատարների կողմից դատական գործընթացները երբեմն վերածվում են ակտիվիստների, քա-

31 A1 Plus. (2026, ապրիլի 14). Եթե Նիկոլ Փաշինյանը չլիներ, ձեր մեծամասնությունը «ինոագենտ» կլիներ. Ալեն Սիմոնյանը՝ լրագրողներին. Youtube. https://a1plus.am/hy/article/500438

32 Առաջին լրատվական ալիք. (2026, ապրիլի 15). ՌԴ-ի հետ ձեռք ենք բերել ռազմավարական նշանակության պայմանավորվածություններ, որի արտահայտությունն առաջիկայում կտեսնենք. Փաշինյան. 1lurer.am. https://www.1lurer.am/hy/2026/04/15/1/1496636

ղաքացիական հասարակության ներկայացուցիչների և լրագրողների նկատմամբ ճնշման գործիքի: Սա արտահայտվում է ինչպես քաղաքական դերակատարների կողմից լրատվամիջոցների դեմ ներկայացվող դատական հայցերով, որոնք ազդում են մեդիայի ազատության միջավայրի վրա[33], այնպես էլ ռազմավարական դատական հայցերի (SLAPP) կիրառմամբ, որոնք հատկապես հաճախ օգտագործվում են բնապահպանական և համայնքային շարժումների դեմ: Այսպիսի պրակտիկաները կարող են սահմանափակել հանրային մասնակցության տարածքները և թուլացնել տեղային ժողովրդավարության հիմքերը:

ԱՄՓՈՓՈՒՄ. ՔԱՂՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գալիք խորհրդարանական ընտրությունների համատեքստում քաղհասարակության ապալեգիտիմացման փորձերը չեն սահմանափակվում պարզապես քննադատությամբ, այլ ակնհայտ են դարձնում քաղհասարակությանն ուղղված էպիստեմոլոգիական թիրախավորումը, որը կարող է քայքայել քաղաքացիական սուբյեկտայնության հիմքերը՝ այն վերածելով գործիքայնացման օբյեկտի: Այս նարատիվների ազդեցությունն ու դրանց հետևանքները կարող են լինել շատ ավելի խորքային՝ դուրս գալով ընտրական գործընթացների ժամանակային սահմաններից: Քաղհասարակության թիրախավորումը վերածվում է «իրականը», «լեգիտիմը» և հանրային շահը սահմանելու իրավունքի համար մղվող երկարատև դիսկուրսիվ պայքարի, որը կարող է իր ազդեցությունը պահպանել նաև հետընտրական շրջանում՝ անկախ քաղաքական վերադասավորումների արդյունքներից:

Սա հատկապես վտանգավոր է հայաստանյան քաղհասարակության համար, քանի որ նման էպիստեմիկ ճնշումը կարող է հանգեցնել ոչ միայն դրա ինստիտուցիոնալ հիշողության և ավանդի վերախմբագրմանը կամ չեղարկմանը, այլև հանրային դերի վերասահմանմանը: Երբ քաղհասարակության տարիներով կուտակված փորձառությունն ու ձեռքբերումները

33 Reporters Without Borders. Armenia. (2026, ապրիլի 30). https://rsf.org/en/country/armenia

ստորադասվում են ընթացիկ քաղաքական նպատակահարմարությանը, կասկածի տակ են դրվում նաև դրա գոյության անհրաժեշտությունն ու հանրային արժեքը:

Նախընտրական շրջանում մեդիա և քաղաքացիական հարթակները հայտնվում են նաև ներքին մասնագիտական մարտահրավերների, ընդդիմադիր ուժերի, պսևդոքաղհասարակության ներկայացուցիչների և պետական ապարատի՝ լեգիտիմության սահմանները վերաձևելու միտումների խաչմերուկում: Միաժամանակ, արտաքին թիրախավորման մեխանիզմները վերջին տարիներին կրել են էական փոխակերպումներ: Եթե նախկինում հիմնական շեշտադրումը ֆինանսական աղբյուրների վրա էր, ապա այսօր թիրախավորումը տեղափոխվել է քաղաքական դիրքավորման, հավատարմության և անվտանգային պատասխանատվության դաշտ: Այս գործիքակազմը ձևավորում է մի կաղապար, որտեղ քաղհասարակության դերակատարների մասնագիտական գործունեությունն ու հանրային դիրքորոշումները նախապես ընթերցվում են քաղաքական շահերի պրիզմայով:

Այս համատեքստում հատկապես կարևոր է հարցադրել «չեզոքության» մասին տարածված պատկերացումները: Քաղաքականապես բևեռացված միջավայրերում «չեզոքությունը» հաճախ ներկայացվում է որպես ցանկալի կամ պարտադիր դիրք, մինչդեռ գործնականում այն հաճախ վերածվում է նորմատիվ պահանջի, որով կարգավորվում է՝ ով է համարվում լեգիտիմ խոսող, և ով՝ ոչ: Քաղհասարակությունը չի գործում քաղաքականությունից դուրս վակուումում. այն մշտապես զբաղվում է հանրային արժեքների, իրավունքների, ժողովրդավարության, խաղաղության կամ արդարության հարցերով, որոնք ինքնին քաղաքական բնույթ ունեն: Հետևաբար խնդիրը ոչ թե «չեզոք» լինելն է, այլ սեփական դիրքորոշումների, արժեքների և պատասխանատվության շրջանակների հստակեցումը, ինչպես նաև անկախության և հանրային հաշվետվողականության պահպանումը:

Այս պայմաններում քաղհասարակության ապալեգիտիմացումը ձեռք է բերում գոյաբանական բնույթ, որտեղ «խաղաղության օրակարգը», որը հետպատերազմյան ճգնաժամի պայմաններում կարող էր ծառայել որպես համախմբող նարատիվ, վերածվում է բաժանարար և բևեռացումն ավելի խորացնող գործիքի: Քաղաքացիական դերակատարների փոր-

ձերը՝ առերեսվելու առկա իրողություններին և ձևավորելու խաղաղության տեսլական, հաճախ բախվում են կանխակալ ընկալումների: Արդյունքում խաղաղության շուրջ հանրային դաշտը վերածվում է մրցակցող նարատիվների պայքարի: Մի կողմից՝ խաղաղության դիսկուրսը նույնացվում է իշխանությունների քաղաքական օրակարգի հետ, մյուս կողմից՝ հակաժողովրդավար դերակատարները շրջանառում են «արժանապատիվ խաղաղություն», «ուժեղ խաղաղություն» և նման այլ ձևակերպումներ՝ որպես նորմատիվորեն «ճիշտ» այլընտրանքներ: Այս պայմաններում խաղաղության մասին խոսող անկախ քաղաքացիական դերակատարները հաճախ հայտնվում են թիրախավորման կենտրոնում, իսկ նրանց դիրքորոշումները ներկայացվում են ոչ թե որպես ինքնուրույն քաղաքացիական խոսք, այլ որպես քաղաքական լոյալության դրսևորում:

Հաշվի առնելով նախընտրական շրջանում թիրախավորման և ապալեգիտիմացնող նարատիվների ակտիվացումը՝ քաղհասարակության համար առանցքային նշանակություն է ձեռք բերում հանրության լայն խմբերի հետ կայուն և երկարաժամկետ հարաբերությունների ձևավորումը: Սա չի սահմանափակվում միայն հաղորդակցական ռազմավարությունների կատարելագործմամբ կամ հանրային տեսանելիության բարձրացմամբ, այլ ենթադրում է հասարակության տարբեր խմբերի հետ իրական, շարունակական և փոխադարձ ներգրավվածության հարաբերությունների կառուցում: Քաղհասարակության լեգիտիմությունը չի ձևավորվում բացառապես ինստիտուցիոնալ ճանաչման կամ արտաքին աջակցության միջոցով, այլև այն բանի շուրջ, թե որքանով է այն ընկալվում որպես հանրային փորձառությունների, մտահոգությունների և կարիքների արտահայտման ու ներկայացման տարածք:

Այս համատեքստում համայնքների հետ շարունակական կապի պահպանումը, հանրային վստահության ամրապնդումը և հանրային լայն շերտերի համար հասանելի և վստահելի լինելը կարող են դառնալ ոչ միայն դիմակայունության գործիքներ, այլև քաղհասարակության հանրային հիմքերի վերարտադրության կարևոր պայմաններ:

Սա հատկապես կարևոր է այն պայմաններում, երբ ապալեգիտիմացնող նարատիվները փորձում են քաղհասարակությանը ներկայացնել որպես հանրությունից առանձնացած, արտաքին ազդեցություններով պայմանավորված կամ նեղ շահերով առաջնորդվող դերակատարի:

Միաժամանակ, դիմակայունությունը չի կարող սահմանափակվել միայն արտաքին թիրախավորումներին արձագանքելով: Այն ենթադրում է նաև ներքին քննադատական վերանայում՝ կապված ներկայացվածության, ներառականության, լեզվի և հանրային մասնակցության ձևերի հետ: Քաղհասարակության համար առանցքային մարտահրավերը ոչ միայն իր շուրջը ձևավորվող նարատիվներին հակազդելն է, այլև սեփական գործունեության շուրջ այնպիսի հանրային տարածքների ձևավորումը, որտեղ հնարավոր կլինի պահպանել բազմակարծությունը առանց ներքին լռեցման և լեգիտիմության սահմանների վերահսկման մեխանիզմների վերարտադրության:

Այս պայմաններում քաղհասարակության դիմակայունության հիմնարար նախապայմանը նրա սուբյեկտայնության պահպանումն է որպես ինքնուրույն, հանրային վստահություն վայելող և ժողովրդավարական գործընթացներում ակտիվ դերակատարի: Խոսքը ոչ թե քաղաքականությունից դուրս կամ «չեզոք» դիրքի պահպանման մասին է, այլ այն կարողության, որով քաղհասարակությունը կարող է հանդես գալ որպես ինքնուրույն հանրային սուբյեկտ՝ ձևավորելով օրակարգեր, բարձրաձայնելով խնդիրներ և ներգրավվելով քաղաքական ու հասարակական գործընթացներում՝ առանց իր լեգիտիմությունն անընդհատ արդարացնելու անհրաժեշտության: